

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Ստորև կը ներկայացնենք Ուրբաթ, 8 Օգոստոս 2008-ի առաւօտեան լոյս տեսած լիբանանեան մամուլի գլխաւոր խորագիրները:

### ՆԱԿԱՐ



Կառավարութեան վստահութեան քուէի նիստերը աւարտելէ ետք, Պըրրի Ռամատանի ամսուան ընթացքին պիտի ձեռնարկէ օրէնսդրական նիստերու շարքի մը:
Խորհրդարանը այսօր պիտի վերադառնայ իր դերակատարութեան: Խօսք առնողներուն թիւը հասաւ 65-ի:
Ճոմպլաթ կը բացայայտէ Լեռնալիբանանին մէջ 3 ղզպալայի հետ միացեալ յանձնախումբերու կազմութիւնը:
Խորայէլեան կառավարութիւնը կը սպառնայ կասեցնել 3 ղզպալայի սպառնազինումը:

### ԱՆՈՒԲԱՐ



Խորայէլ կը շարունակէ սպառնալիքներ դրկել Լիբանանին եւ կ'ակնարկէ ծանր հարուածներու մասին:
Այսօրուան խորհրդարանի նիստին, Պըրրի եւ Սիւհրուա պիտի դառնան առաջին խօսք առնողները:

### ՄՈՒՍԹԱԲՊԱԼ



Պըրրի առանց որեւէ վերապահութեան կառչած կը մնայ թիւ 1701 բանաձեւին գործադրութեան:
Խորհրդարանի անդամներուն կէտը կը փափաքին խօսք առնել այսօր:
Պատասխանի աղբիւրներ կ'ըսեն, թէ Նախագահ Սըլէյման Ասատի հետ պիտի խօսի առնուած որոշումներուն գործադրութիւնը հետապնդելու երանակի մը շուրջ:
Լիվնի եւ Պարաթ կը զգուշացնեն արգիլել 3 ղզպալայի զինումը:

### ՍԱՖԻՐ



Թրիփոլիի մէջ այսօր կայանալիք նստացոյցը քաղաքական եւ ապահովական շահարկումներէ հեռացնելու ճիգեր:
Խորհրդարանական կէտնքը վերսկսաւ: Ընտրական օրինակները համար արտակարգ նիստ մը:
Դամասկոս կ'աշխատի փակել այնպէս կորսուածներու թղթածրարը: Մարտ 14-ի ուժեր կը վերարարծեն սուրիական թղթածրարը:

### ԼԻՈՒԲ



Նախագահ Սըլէյման կ'աճապարէ նշանակելու բանակին հրամանատարը, գլխաւոր թեկնածուներն են Խուրի, Պիթար, Ղահուաճի եւ Մասաատ:
Խորհրդարանի վստահութեան նիստերը պիտի վերածուին ընտրական ասկարկութիւններու եւ ելոյթներու թեմի մը:
Լիբանան-Սուրիա համագործակցութեան գերագոյն խորհուրդը պիտի շարունակէ իր առաքելութիւնը:
Լիբանանի մօտ Սեուտական Արաբիոյ դեսպալ՝ Ապտէ Ազիզ Խոճա դրական տուեալներ կը շօշափէ Նախագահ Սըլէյմանի Դամասկոս կատարելիք այցելութենէն:

### ՏԻԱՐ



Եւրոպական Խորհրդարանի Նախագահը լիբանանցի պատասխանատուներուն բացատրեց Խորայէլի հետ ուղղակի բանակցութիւններ վարելու անհրաժեշտութիւնը:
3 ղզպալա եւ անոր համախոհները կը պահանջեն ընդլայնել երկխօսութեան սեղանը, հրաւիրելով՝ 3 արիփի եւ 3 ղզպալայի մնացեալ համախոհները:
Խորհրդարանը յառաջիկայ չորս օրերուն պիտի վերածուի ելոյթներու խճողումով ողողուած սրահի մը:

### ՀԱՅԱԹ



Ճոմպլաթ եւ Ժաճա ընկերակցին համագործակցութիւնը ամրապնդելու հնարաւորութիւնները:
Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու զարգացումը պիտի չըլլայ համագործակցութեան խորհուրդին հաշտոյն:

### ՇԱՐԲ



Եւրոպական Խորհրդարանի Նախագահին Լիբանան այցելութիւնը կը միտի աշխուժութիւն տալ խաղաղութեան գործընթացի աշխատանքներուն:
Այսօր պիտի սկսին վստահութեան քուէի նիստերը: Խօսք փափաքողներուն թիւը հասաւ 65-ի:
Մարտ 14-ի ուժերը, Նախագահ Սըլէյմանին յանձնեցին Լիբանան-Սուրիա յարաբերութիւններուն մասին իրենց պատկերացումը:
Ճոմպլաթ կը մերժէ Աունի հետ դէմ առ դէմ խօսակցութիւնը:

### ՇԱՐԲ ԱՌԻՍԱԹ



Եւրոպական Խորհրդարանի Նախագահը այցելութիւններ տուաւ Սըլէյմանին, Սիւհրուային եւ Պըրրիին: Ան այսօր պիտի այցելէ հարաւային Լիբանան:

### ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Աշխարհի բազմակի այնպէս՝ Արթուր Աբրահամի եւ ամերիկացի Ռատլ Սարբեգի մրցամարտը տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ, 3 օր տեւողով 4-ին: Նշենք, թէ հայազգի Արթուր Աբրահամ բռնցքամարտի I.B.F. կարգի աշխարհի պիտի լինի:
Ալեյի բան երկու հարիւր երկիրներու մասնակցութեամբ երկ ֓եքիսի մէջ կատարուեցաւ Ամանային Ռոյնպիական խաղերու բացման արարողութիւնը: Մարզական այս մեծ փառատօնին մասնակցեցան աւելի քան 11 հազար մարզիկներ: Ռոյնպիական հաղերուն ընթացքին պիտի կիրարկուին 28 տարբեր մարզաձեւեր: Ռոյնպիական խաղերուն վայրագոյրը վար պիտի իջնէ Օգոստոս 24-ին:

Haigazian University
Congratulations for passing your Baccalaureate exams!
APPLY NOW
Admissions Office 01-349230/1 01-353010/1/2
admissions@haigazian.edu.lb
www.haigazian.edu.lb

ԼԻԲԱՆԱՆԱՅԱՅ ԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ
60-ԱՄԵԱԿԻ ԾԻՐԻՆ ՄԵՋ
ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՊՏՈՅՏ ԴԵՊԻ
Անապական օդով ու ջուրով հռչակ շահած ՔԱՅԱՄԵՋ-Ի ԱՅՆ ԷԼ-ԱՄՐՈՒՄ ԸՆՇԱՐԱՆԸ
© Բնական անարատութեամբ ուտելիք եւ խմիչք
© Յայտագրի վրայ խօսք, երգ, նուազ եւ պար
© Մեծ պարգեւին վիճակածոթիւնը՝ տոմսի թիւին վրայ:
Կիրակի, 24 Օգոստոս 2008-ի ամբողջ ցերեկը:
Մանրամասնութեանց եւ տոմսի համար դիմել՝ անդամներուն:

Յ.Կ.Բ.Մ.-Ի
ՍԱՅԱԿԵԱՆ-ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ ԳՈԼԵՃԻ
2008-2009 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԵՌ. 01-492726
Տնօրէնութիւնս բացուած կը յայտարարէ 2008-2009 ուսումնական տարեշրջանի արձանագրութիւնները ինչ որ նոր աշակերտներուն, Յուլիս ամսուան ընթացքին, Երեքշաբթի, 3 ղզպաթի եւ Ուրբաթ օրերը առաւօտեան ժամը 9:00-էն 12:30:
Նոր աշակերտներէն կը պահանջուի՝
ա. Ինքնութեան թուղթի լուսապատճեն
բ. 2 լուսանկար
գ. Նախկին վարժարանի պետական թիւը՝ վաւերացուած դ. Վերջին տարուան վիճակացոյցը
ե. Բարի վարուց վկայագիր
ՈՒՇԱՐՈՒԹԻՒՆ
Տնօրէնութիւնս կը տեղեկացնէ թէ՝
1. 2008-2009 ուսումնական տարեշրջանին համար կրթաթոշակները կը մնան անփոփոխ:
2. Օթոբարներ բոլոր շրջաններու համար:
3. Գ. Տնօրէնութիւնս կը յայտարարէ, թէ կարիքը ունի գիտական առարկաներ դասաւանդող ուսուցիչներու, ուստի դիմող ուսուցիչներէն կը խնդրուի ներկայանալ վերոյիշեալ օրերուն, կամ հեռաձայնել 03-278524 թիւին:
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒԹԻՒՆ
Վաչէ Սահակեանի ընդ Սարին Սարիատեանի պատկառութեան առիթով, Ս. Գերոզ եկեղեցւոյ թաղականութիւնը, տիկնանց միութիւնը եւ Գայիանէ երգչախումբը կը շնորհաւորեն Նորապսակ ամուլը եւ անոնց ընտանեկան պարագաները:

ԱՊԱՔԻՆՈՒՄԻ ՄԱՂԹԱՆԵՐ
Տեր եւ տիկ. Երուանդ Պալեան շուտափոյթ եւ անմիջական ապաքինում կը մաղթեն Պոռուլու Գառնազարեանին, որ վիրաբուժական գործողութեան մը ենթարկուելէ ետք ներկայիս կը բոլորէ ապաքինման շրջան մը:
\*\*\*
Նոյն առիթով, Գառնազարեան ընտանիք շուտափոյթ եւ անմիջական ապաքինում կը մաղթէ Պոռուլու Գառնազարեանին:

Մ Ա Հ Ա Ջ Դ
Տիկ. Շաքէ Ալթունեան
Տեր եւ տիկ. Գերոզ Սազապետոյեան եւ զաւակը՝ Պողոս Տեր եւ տիկ. Վահան Սազապետոյեան եւ զաւակուկը Տեր եւ տիկ. Յակոբ Սազապետոյեան եւ զաւակուկը Տեր եւ տիկ. Ռուբէն Սազապետոյեան եւ զաւակուկը (Երեւան) Տիկ. Յասմիկ Սազապետոյեան եւ զաւակուկը (Երեւան) Տեր եւ տիկ. Յարութ Սահակեան եւ զաւակուկը (Երեւան) եւ համայն Ալթունեան, Սազապետոյեան, Զեյնեան եւ Տերոյեան ընտանիքներ կը գոմեն իրենց ամուսնոյն, քեռայրին եւ հարազատին՝
ԱՇՈՏ ՅԱԿՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ
մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 5 Օգոստոս 2008-ին, իր բնակարանին մէջ:
Թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը կէսօրուան ժամը 1:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Ֆրնի Շրպալէի Ազգային գերեզմանատուն եւ ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:
© Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
© Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանին մէջ, ժալ Էլ Տիպ, 3 րոյն յարկ:

USUՅԱՆԸ
LIBAN
entre stabilite interieure
et
securite regionale
Nora Bayrakdarian Kabakian

Ս.Գ.Յ.Կ. ԸՆԿԵՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՂՈՆ
Ս.Գ.Յ.Կ. Ընկերային Ծառայութեան Գրասենեակը (Նոր Զաճըն), կ'օժանդակէ քաղաքացիներուն զանազան տեսակի կարիքներուն:
Ընկերային Ծառայութեան գրասենեակը բաց է ամէն օր, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, առաւօտեան ժամը 9:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 4:00:
Յաւելեալ մանրամասնութեանց եւ կապ հաստատելու համար կրնանք հեռաձայնել՝ 01-444738 թիւին:

ԳՐԱՎՈՒԾ ՕՐ
Պատասխանելի վայելելու Սաննիկի մաքուր օդը եւ Կուլալ գուրը, մասնակցելով Ս.Գ.Յ.Կ. «Մարտ Նապարթեան» մասնաճիւղի արձեանագրութեան:
3 Սեպտեմբեր 2008

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԸ
8 օր դէպի ՎԱՆԱԿ, պանդոկ, օդանաւի տոմս, պտոյտ, սակ՝ միայն 277 եւրօ:
Ամէն շաբաթ 4 օր դէպի Կիպրոս, Նախաճաշ, պանդոկ, օդանաւի տոմս, սակ՝ միայն \$245:
Սօս օրէն դէպի Թեհրան եւ Նոր Ջուղա շրջապտոյտներու յայտագիր:
Հեռ. 01-261177, 03-233978:

ASHJIAN TOURS
ԲԱՅԱՌԻԿ ՇՐՋԱՊՏՈՅՏ
ԴԵՊԻ ՅԱՅԱՍԱՆ
29 ՍԵՊՏԵՄԲԵՐԷՆ 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ (8 օր)
\$1275 (FULL BOARD)
© Օդանաւի տոմս. 5 աստղանի պանդոկ VISA, օդակալանի տուրքերը
© Օրական շրջապտոյտ, Մշակութային ձեռնարկ
© Ճաշկերոյթ-պարահանդէս, յիշատակի նուէրներ
Արձանագրութեան համար դիմել
ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԸ՝ 01-260654 եւ 03-233978 թիւերուն:

ԱՇՃԵԱՆ ԹՈՒՐԸ
ՈՒՇԱՐՈՒԹԻՒՆ
11-18 Օգոստոս եւ 1-8 Սեպտեմբերի՝ դէպի Հայաստան շրջապտոյտներու ցանկը վերջնականապէս փակուած է: Շրջապտոյտներուն մասնակցիլ փափաքողներէն կը խնդրուի ներկայանալ մեր գրասենեակը՝ ստանալու համար իրենց տոմսերը, փակելով Նաեւ յետեւալ հաշիւները: Մնացած են որոշ թիւով տեղեր՝ 22-29 Սեպտեմբերի Միւռնոսօրիները, եւ 29 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբերի շրջապտոյտին եւ դէպի Հայաստան ու Արցախ 12-26 Սեպտեմբեր VIP շրջապտոյտին համար:
ԾԱՆՕԹ. 29 Սեպտեմբերէն 6 Հոկտեմբերի շրջապտոյտին համար անոնք, որոնք կ'արձանագրուին մինչեւ 7 Օգոստոս, կը ստանան 10 առ հարիւրի մասնաւոր գեղջ մը: Հեռ. 01-260654, 01-261177 եւ 03-233978:

ASHJIAN TOURS
ՅԻՇԱՍԱԿԵԼԻ ՇՐՋԱՊՏՈՅՏ (VIP)՝
ԴԵՊԻ ՅԱՅԱՍԱՆ ԵՒ ԱՐՑԱՆ
12-ԷՆ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ (15 ՕՐ)
\$2650 (full board)
© Օդանաւի տոմս՝ Պէրլուէն. Վիզա, 5 աստղանի պանդոկ (suite)
© Օրական շրջապտոյտ (Երեւան եւ Արցախ). Մշակութային ձեռնարկներ
© Եզակի խրախմանքներ. ճաշկերոյթ-պարահանդէս
© Յիշատակի նուէրներ. Անակնկալներ:
Արձանագրութեան համար դիմել՝
հեռ. 01-260654 եւ 03-233978:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Երիցուի Մարի Ալքըեանի մահուան Բ. տարեիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2008-ին, Ռըմէլի Ս. Յարութեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
Ալպետ Թիւթիւնճեանի մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 10 Օգոստոս 2008-ին, Ռըմէլի (Խալիլ Պատարի) Ս. Յարութեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ARARAD DAILY NEWSPAPER
Tel. - Fax: 01-56 55 99
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb
جريدة يومية سياسية أرمنية
تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.م.)
المدير المسؤول: ابيموغوم كريشكيان